# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## ՆԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/47 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան <<16>> <<05>> 2018թ.

ժամը 14 :00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու**

Տ.Ղարիբյան- ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ:

**Անդամներ ՝ ԳՊ/ԲԱ –բացող անձնակազմ**

Հ. Ծատուրյան՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի իրավաբանական վարչության փորձագետ:

**Անդամներ ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ**

**Ա.Բաղդասարյան** ՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության պետ:

**Վ.Դադոյան**՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ:

Բացակայում էր՝

**Ա.Մկոյան**՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ:

**Հանձնաժողովի քարտուղար**՝

**Ա. Մարգարյան**՝ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ:

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-18/47» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «Կոմպմարկետ», «ՆՈՈՒԻԹ.ԱՄ», «ԿՈՄՊԼԵՆԴ» և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությունների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ «Կոմպմարկետ», «ՆՈՈՒԻԹ.ԱՄ», «ԿՈՄՊԼԵՆԴ» և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերություններին, ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/: «Կոմպմարկետ» ՍՊԸ-ից պահանջվել է նաև 1-ին չափաբաժնով ներկայացնել Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է եզրակացություն /կցվում է/:

2.2 «ԿՈՄՊԼԵՆԴ» ՍՊԸ-ն ունի գնային առաջարկի 1%-ը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

2.3 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ մասնակիցների կողմից ներկայացվել են և համապատասխանում են հրավերի պահանջներին:

| N | Մասնակցի գնահատվող | Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման արդյունքները* |
|---|---|---|

| | չափանիշը | Մասնակցի անվանումը | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Կոմպմարկետ ՍՊԸ | ՆՈՐՈՒԹ.ԱՄ ՍՊԸ | Կոմպլենդ ՍՊԸ | Էյչ գրուպ ՍՊԸ |
| | *Չափաբաժիններ* | 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Մասնակցության հրավերը | Բավարար | Բավարար | Անբավարար | Բավարար |
| 2. | «Մասնագիտական փորձառություն» | Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 3 | Տեխնիկական միջոցներ | Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 4 | Աշխատանքային ռեսուրսներ | Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 5 | Ֆինանսական չափորոշիչ | Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 6 | Առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը | Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | Բավարար | Բավարար | Անբավարար | Բավարար |

**Կողմ՝ 4 Դեմ՝ 0**

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

3.1 Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետով՝ մերժել Կոմպլենդ ՍՊԸ հայտը

3.2 Նիստը կասեցնել մինչև 21.05.2017թ. ժամը 16.00-ն և ծանուցել հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին՝ Կոմպմարկետ ՍՊԸ-ին, առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 21.05.2018թ. ներկայացնել 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը և իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

**Կողմ՝ 4 Դեմ՝ 0**

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

**Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու**

**Տ. Ղարիբյան**

**Անդամներ ՝ ԳՊ/ԲԱ –բացող անձնակազմ**

**Հ. Ծատուրյան**

**Անդամներ ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ**

**Ա. Բաղդասարյան**

**Վ.Դադոյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝**

**Ա.Մարգարյան**